



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 109-Ա  
ք. Երևան

#### «ՇԱՆԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳԻՐ ՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության սեփական արտադրության հեռուստածրագիրը հեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության դիմումը և տալ «Շանթ Քիդս» սեփական արտադրության հեռուստածրագիրը հեռարձակելու թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 11  
ք. Երևան